ԱԼՎԱՐԴ ՄԱԿԱՐՅԱՆ

ՆՊԱՏԱԿԱՀԱՐՈՒՅՑ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԵՐԻՆ

Դպրոց հաճախող երեխայի կյանքում սկսվում է բոլորովին նոր փուլ, ուստի վերջինս պետք է բավարար չափով նախապատրաստված լինի այդ բարդ ու հետաքրքիր աշխատանքին: Արտաքուստ թվում է, թե այդքան էլ կարևոր չէ երեխաներին նախապատրաստել ուսումնական աշխատանքներին, և համեմատաբար հեշտ է տարրական դասարաններում աշակերտների հետ ուսուցման ու դաստիարակչական խնդիրներ իրականացնելը: Սակայն, շփվելով 6-7 տարեկանների հետ, նկատում ենք, որ նրանց մի մասը առաջին մի քանի օրերից հետո դժվարությամբ է հաճախում դպրոց, կամ էլ չի ցանկանում հաճախել: Այս փաստը հատկապես ավելի ակնառու է մանկապարտեզ չհաճախած երեխաների վարքագծում:

Ոտք դնելով դպրոցից ներս առաջին դասարանի երեխան ընկնում է բոլորովին մի այլ աշխարհ, որտեղ կան տարբեր բնավորության երեխաներ և չափահասներ, ու նա հանդիպում է մի մեծ խոչընդոտի՝ ինչպես հաղորդակցվել, շփվել բոլորի հետ, ինչպես դրսևորել իրեն դասերի ժամանակ և դասերից դուրս, դասամիջոցներին:

Դպրոցական կյանքի ոլորտը մուտք գործելու սկզբնական շրջանում երեխայի հոգեկանը լուրջ փոփոխություններ է կրում: Նա ձեռք է բերում նոր ռեժիմի հետ կապված կարևոր ունակություններ և փոխադարձ վստահության վրա հիմնված հարաբերություններ է հաստատում ուսուցիչների ու ընկերների հետ:

Երեխան զարմանում է՝ չիմանալով, թե իր դասընկերները ինչպես են ապրում, ինչպես են գնահատում մեկը մյուսին, ինչպես են զանազանում չարը բարուց:

Համամիտ ենք մանկավարժ-հոգեբան Գ. Էդիլյանի տեսակետին, որ «առաջին օրերի դասերը, փաստորեն, մարդաբանական դասեր են, և այդ ուղղությամբ ցանկացած տարրականի դասավար գործնական դասեր է վարում» (2,638): Ուստի առաջին դասարանի դասվարը պետք է կարողանա ճիշտ ճանաչել երեխաներին, հնարավորության սահմաններում իմանա նրանց հուզող ու հետաքրքրող խնդիրների ու հարցերի շրջանակը, որպեսզի դասերը կառուցի այդ տեսանկյունից՝ սեր, հետաքրքրություն առաջացնելով դեպի դասը, որպեսզի աստիճանաբար երեխաների մեջ ձևավորվի կամածին ուշադրություն

(հաճելի է խաղալ, սակայն պետք է դասը լսել): Տարրական դասարաններում իրականացվող դասերը իրենց բնույթով ու հետաքրքրությամբ պետք է գրավեն աշակերտներին: Ինչպես ժամանակին նշել է Գ. Էդիլսանը գտնում է, որ «աշակերտը մի փոքրիկ հետազոտող գիտնական է, ուստի հետազոտողի առաջ չի կարելի հարցերը քննված և վերջնական ձևակերպմամբ դնել: Այդ քննելիք խնդիրը պետք է վստահել հետազոտողի անձնական աշխատանքին», որպեսզի վերջինս իր անմիջական ցանկությամբ դասուսուցման գործընթացի ակտիվ մասնակիցը դառնա իր ընկալածն ու յուրացրածը ներկայացնի:

Համաձայնելով վերը նշված տեսակետին՝ գտնում ենք, որ դասավանդման հարցողական եղանակը համարելով դասի մեթոդական կառուցվածքի հիմքը, մենք տարրական դասարանի աշակերտներին պետք է հնարավորություն տանք լիարժեք բացահայտվելու, իր նպատակներն ու ցանկությունները արտահայտելու: Վերջիններս էլ դասվարին կօգնեն, ոչ միայն կատարյալ ճանաչել իր սանին, ծանոթանալ նրա ցանկություններին ու նպատակներին, այլև տարրական դասարաններում ուսուցման աշխատանքները կազմակերպել նպատակասլաց՝ ելնելով աշակերտների և՝ մտավոր կարողություններից, և՝ ցանկություններից:

Այստեղ առաջ է գալիս նպատակահարույց ուսուցման խնդիրը, որի ժամանակ «... պետք է լարված պահել աշակերտի միտքը, մղել նրան որոնողական աշխատանքի, պրոբլեմային հարցադրումներ ներկայացնել և թույլ տալ, որ եզրակացությունը աշակերտը կատարի՝ ուսուցչի օգնությամբ»(3,62): Ինչպես նշել է մանկավարժագետ Ա. Մանուկյանը, պրակտիկայում դեռևս չի գործում նպատակահարույց ուսուցման տեսությունը, և ամեն ինչ արվում է «խթանների միջոցով»:

Մեր՝ տարրական դասարաններում կատարված ուսումնասիրությունները՝ պարզեցին, որ 6-7 և 8-10 տարեկան երեխաների նախասիրություններն ու ցանկությունները հիմնովին տարբերվում են իրարից: Առաջին դասարանի երեխաների մեծ մասին հետաքրքրում է՝ ուսումնական գործընթացի արտաքին կողմը՝ պայուսակ ունենալ, դպրոց գնալ, գնահատական ստանալ, խաղալ սիրած խաղալիքով:

Սեպտեմբերի առաջին շաբաթներին առաջին դասարանցին անմիջապես չի հարմարվում ուսումնական գործընթացի պահանջներին (դասերին լուռ և ուշադիր լսել ուսուցչին, տանը դասերը սովորել, կատարել տնային հանձնարարությունները), նրան դեռևս հետաքրքրում է խաղն ու իր սիրած խաղալիքը, ապրում է իր հեքիաթային աշխարհով: Այսպես, Վանաձորի թիվ 5 միջն դպրոցի

Ի դասարանի մի աշակերտ հաճախակի խաղում էր իր սիրած խաղալիքի՝ շնիկի հետ, ոչ մի կերպ չէր ցանկանում բաժանվել նրանից :

Բնական է, որ սկսնակ, փորձ չունեցող դասվարը պետք է արգելեր երեխային՝ դասերին խաղալիքով զբաղվել, մի հանգամանք, որը խորթություն կառաջացներ աշակերտ-դասվար հարաբերություններում՝ երեխայի մեջ հիասթափություն առաջացնելով դեպի դասն ու դպրոցը: Չէ՞ որ նրանից պահանջում են հրաժարվել իր սիրելի խաղալիքից: Սակայն տվյալ դասարանի փորձառու դասվարը նրբանկատորեն վերաբերվեց այդ փաստին: Զրույց կազմակերպեց դասարանում «Իմ սիրած խաղալիքը» թեմայով: Նախօրոք երեխաներին հանձնարարել էր, օրվա զրույցի հետ կապված, դասարան բերել սիրած խաղալիքները: Յուրաքանչյուր աշակերտ պատմեց, թե ինչու է սիրում իր խաղալիքը: Զրույցի վերջում անդրադարձավ շնիկ խաղալիքին, սովորեցրեց երգ շնիկի մասին, երեխաները նկարվեցին սիրած խաղալիքների հետ:

Հետո հանձնարարվեց երեխային «Շ,շ» հնչյուն- տառի ուսուցման ժամանակ անպայման խաղալիքը բերել դասարան: Աշակերտը բավարարված զգաց, և խաղալիքը այլևս դպրոց չբերեց:

Այս փաստը մեզ հուշեց՝ ճշտելու, թե տարրական դասարաններում ինչն է հետաքրքրում, հուզում երեխային, և ինչ տեղ է գրավում ուսումը նրան հետաքրքրող հարցերի շրջանակներում, ինչպես կազմակերպենք ու անցկացնենք մայրենիի դասերը, որ վերջիններս դառնան հաճելի ու հետաքրքիր սեր առաջացնելով դեպի դասն ու ուսումնական գործընթացը: Այդ նպատակով գրավոր հարցումներ անցկացրինք Վանաձորի թիվ 5 և 15 միջն դպրոցների I-III դասարաններում «Ինչ եմ ուզում» վերնագրով: Հարցումից պարզվեց, որ առաջին դասարանցիների հիմնական մասը հոգեբանորեն պատրաստ չէ դպրոցին, նրանց ավելի շատ խաղն է գերում:

Առաջին դասարանցիների 85 %-ը ցանկանում է տարբեր որակների ու տեսակների խաղալիքներ, 8%-ը՝ ծնողների ու հարազատների հետ կապված ցանկություններ («Ուզում եմ հայրիկս վերադառնա Ռուսաստանից», «Ցանկանում եմ՝ մայրիկս չհիվանդանա», «Կցանկանայի եղբայրս վերադառնար բանակից»): Միայն 7%-ն էր ցանկանում գրաճանաչ դառնալ, գրքեր, պայուսակ և մատիտներ ունենալ:

Ահա, թե ինչու վերը նշված տղան շնիկի հետ էր ուզում դպրոց գալ, նրան ավելի շատ հետաքրքրում էին խաղալիքն ու խաղը և հոգեկան մեծ ցավ կապրեր, եթե նրա ծեռքից վերցնեինք խաղալիքը, կամ կտրուկ արգելեինք այն դպրոց բերել: Ուսուցիչը իր վարմունքով երեխայի մեջ կմեռցներ վստահությունն ու սերը, հետաքրքրությունը դասի, հետագայում նաև ուսման նկատ-

մամբ: Այսինքն՝ եթե դասին մենք իրականացնենք միայն մի նպատակ՝ աշակերտին հաղորդել օրվա ուսուցանվելիք նյութը՝ առանց հաշվի նստելու երեխայի ցանկությունների ու հետաքրքրությունների հետ՝ խթան-դրդապատճառ չառաջացնելով երեխայի մեջ դեպի դասն ու ուսումը, մեր աշխատանքը կդառնա անհետաքրքիր և անարդյունավետ: Հետևաբար, առաջին դասարանում ուսումնական տարվա առաջին օրերին պետք է դասը վարել՝ առաջնային տեղ տալով երեխաների հետաքրքրություններին, որպեսզի նրանք աշխույժ, անկաշկանդ ու հաճույքով մասնակցեն հանձնարարված աշխատանքներին: Այսինքն, խնդրի լուծման տեսական հիմքից ելնելով, պետք է խոսքային ցանկացած գործունեությունում կարևորենք «դրդապատճառներն ու նպատակները» (3,70):

Երկրորդ դասարանում հարցման արդյունքից պարզվեց, որ աշակերտների մի մասը (մոտ 58%) ցանկանում էր, որ դպրոցում կազմակերպվեն հետաքրքիր միջոցառումներ, էքսկուրսիաներ, մնացած 42%-ը՝ լավ սովորել, շատ գիտելիքներ ծեռք բերել:

Ինչպես նկատում ենք, այս դասարանում ինչ-որ չափով տեղաշարժ կար սովորելու, ուսման նկատմամբ: Սակայն երեխաների գերակշիռ մասը դեռ լիարժեք ձևավորված չէ որպես աշակերտ, նրանց դեռ հետաքրքրում են միջոցառումները, մտավոր աշխատանքը համեմատաբար ետ է մնում տոկոսային հարաբերությամբ:

Երկրորդ դասարանցիները հետաքրքրությունների լայն շրջանակ ունեն, հաճույք են զգում զրուցելուց: Զգայուն են ուրիշների զգացմունքների նկատմամբ, գերիշխում է հուզականությունը: Ծանր են տանում, երբ ուսուցիչը դույզն- ինչ անտարբեր է իրենց նկատմամբ, կամ որևէ աշակերտի անհրաժեշտից ավելի շատ է ուշադրություն դարձնում: Նրանք բոլորն էլ հավասարապես այդ վերաբերմունքի կարիքն են զգում, սիրում են ակտիվ խաղեր, ավելի շատ եռանդ են դրսևորում, քան լուրջ դատողություն:

Այս դասարանի դասվարը դեռևս պետք է իր ուշադրության կենտրոնում պահի աշակերտների ցանկությունները և, դասերը հիմնականում վարի հնարավորինս երեխաների հետաքրքրությունների շրջանակներում, որովհետև այս տարիքում երեխաներին միայն գիտելիքներ հաղորդելով ու ուսուցման առաջին տարիներին երեխաներից այս կամ այն տվյալների մտապահում պահանջելով դառնում է խիստ վտանգավոր, որովհետև բաց է թողնվում, կամ ուսուցման գործընթացից դուրս է մնում մի կարևոր երևույթ՝ ուսումնական նյութի նկատմամբ իմացական հետաքրքրության ձևավորումը առաջին իսկ օրից: Եվ այդ աշխատանքը I-II դասարաններում պետք է իրականացվի դասի նկատմամբ ունեցած աշակերտների հետաքրքրությունների շրջանակներում:

Հետագայում վերը նշված հետաքրքրություններն աստիճանաբար պետք է տարածել ուսուցանվող նյութերի վրա, որպեսզի երեխաների մեջ սեր առաջանա դեպի հաղորդվող նյութը, դասագիրքը, հակառակ դեպքում, դասայուրացման գործընթացը աշակերտների համար դառնում է հարկադրաբար կատարվող մի աշխատանք, որը բացասական ազդեցություն է թողնում հետագա տարիների ուսումնական գործընթացի վրա:

3-րդ դասարանում անցկացված հարցումներից ստացանք որակապես այլ տվյալներ: Աշակերտների 50%-ը ցանկանում էր դպրոց գալ, լավ սովորել, 20 %-ը սոցիալապես ապահոված լինել (մայրը, հայրը, աշխատեն, որ գիրք, տետր, մատիտներ ունենան, որ մուրացիկ երեխաներ չլինեն): 10%-ը հետագայում ուսումը շարունակելու և լավ մասնագետ դառնալու ցանկություն էր արտահայտել, 5 %-ը ուզում էր, որ պակասի հայրենիքը լքողների թիվը, մի մասն էլ դասարանի և դպրոցի կարգապահության հարցերն էր առաջ քաշում: Աշակերտների 2%-ը ցանկանում էր համակարգիչ ունենալ:

Հարցումների ընթացքում նկատեցինք, որ առաջին դասարանի աշակերտները ավելի ակտիվ էին, անմիջապես արձագանքեցին առաջադրված հարցերին, իսկ երրորդ դասարանի աշակերտները լրջորեն էին վերաբերվում հանձնարարությանը և, իրենց հնարավորությունների սահմաններում, հարցերին պատասխանում էին հիմնավորելով:

Հարցումից պարզվեց, որ երրորդ դասարանում փոխվել են աշակերտների հետաքրքրությունների շրջանակները, աշխարհայացքը: Երեխաների մտածողությունը համեմատաբար կուռ է ու տրամաբանված, ձգտում են մտավոր անկախության և ինքնուրույնության: Հայրենասիրությունն ու անձնվիրությունը նրանց հոգում լուրջ արձագանք են գտնում: Ունեն սեփական մտահղացումներ ու հետաքրքրություններ, ցանկանում են արտահայտել իրենց կարծիքը:

Օրինակ՝ «Աշուն» թեմայի ամփոփման ժամանակ երրորդ դասարանում բոլոր երեխաները նկարագրում էին տերևաթափը, արևի նվազ ջերմությունը, ծաղիկների քուն մտնելը: Եվ հանկարծ աշակերտներից մեկը փորձեց հակադրվել մյուսներին՝ հայտարարելով որ բոլոր ծաղիկները չէ որ քնած են, դեռ կան արթուն ծաղիկներ, և ինքը տեսել է նրանց: Երեխաները ուշադիր լսում էին, իսկ նա հիացմունքով պատմում էր աշնանային այն քաջարի քրիզանթեմների մասին, որոնց ամեն օր տեսնում էր դպրոց գալու ճանապարհին: Աշակերտը իր սեփական կարծիքը, մոտեցումը համարձակորեն ներկայացրեց աշնան նկատմամբ՝ աշխուժություն և հետաքրքրություն առաջացնելով թեմայի նկատմամբ: Ոչ միայն դասը, այլև ամբողջ թեման հետաքրքրեց, հրապուրեց

աշակերտներին, ու միացյալ ուժերով դասարանում կազմակերպեցինք մի ուսանելի միջոցառում ծաղիկներին նվիրված: Բնական է, որ նման դասերը վառ հիշողություններ կթողնեն երեխաների մեջ և հետաքրքրություն կառաջացնեն դեպի դասերը:

Այսպիսով, ուսումնական գործընթացը հետաքրքիր և նպատակահարույց դարձնելու համար պետք է ուշադրություն դարձնել հետևյալ խնդիրներին.

1. հենց սեպտեմբերյան առաջին օրերից բացահայտել երեխաներին հետաքրքրող հարցերը,
2. ուսումնական գործընթացում ուսուցչի ներկայացվող պահանջներն չպիտի լինեն հարկադրված, քանի որ հարկադրանքը բացասաբար է անդրադառնում դասապատրաստման աշխատանքների, ինչպես նաև աշակերտների վրա,
3. դասը պիտի կազմակերպել նպատակահարույց ուսուցման տեսանկյունից, այն է երեխաների ցանկությունների դաշտում հետաքրքրության ծիլեր աճեցնել դեպի դասը, ուսումնական գործընթացը առաջնորդվելով խթան-դրդապատճառ խնդրով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մ.Աստվածատրյան և ուրիշներ, Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում, (ձեռնարկ ուսուցիչների համար) Այրեքս, Երևան, 2004, էջ 36:
2. Հայ մանկավարժներ, 19-րդ դար. 2-րդ գիրք, Երևան, 1961, էջ 638:
3. Ա.Սանուկյան, Մանկավարժական և աշակերտական դասանպատակները (ոչ պաշտոնական ուսումնական ձեռնարկ) «Լուսաբաց հրատարակչատուն», Երևան, 2003, էջ 62:
4. Ա.Սանուկյան, Մանկավարժական և աշակերտական դասանպատակները (ոչ պաշտոնական ուսումնական ձեռնարկ) «Լուսաբաց հրատարակչատուն», Երևան, 2003, էջ 70: